

# Թվերի ձևափոխություններ

Տրված են  $a$  և  $b$  դրական ամբողջ թվերը, որոնք ունեն հավասար թվով թվանշաններ և չեն պարունակում 0 թվանշանը: Մի քայլով թույլատրվում է  $a$ -ի  $k$  հատ իրար հաջորդող թվանշաններ փոխել հետևյալ կարգով: յուրաքանչյուր թվանշան մեծացնել 1-ով, բացառությամբ 9-երի, վերջիններս փոխարինել 1-երով: Օրինակ, եթե  $a=149$  և  $k=2$ , ապա մեկ քայլով  $a$ -ից կարելի է ստանալ 259 և 151 թվերը: Հարկավոր է գրել ծրագիր, որը հաշվում է  $a$ -ից  $b$  ստանալու մինիմալ քայլերի քանակը:

## Մուտք

Առաջին և երկրորդ տողերում տրված են  $a$  և  $b$  թվերը: Երրորդ տողում տրված է  $k$  ( $1 < k < 10$ ) թիվը:  $a$  և  $b$  թվերը պարունակում են առնվազն  $k$  և առավելագույնը 100 թվանշան:

## Ելք

Հարկավոր է արտածել մեկ թիվ՝  $a$ -ից  $b$ -ն ստանալու մինիմալ քայլերի քանակը: Եթե նկարագրված գործողության միջոցով հնարավոր չէ  $a$ -ից ստանալ  $b$ , արտածել 0 թիվը:

## Օրինակ

### Մուտք.

13579

24691

2

### Ելք.

3